ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 05-Լ

«05» 02 2026թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N 31 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչական շենքի պահպանության և անցագրային ռեժիմի ապահովման մասին» 2008 թվականի ապրիլի 3-ի N 31 հրամանի հավելված N 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի հավելվածով սահմանված կարգավորումները վերաբերելի մասով կիրառվում են ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության, զինվորական կենտրոնական դատախազության, Երևան քաղաքի դատախազության, Երևան քաղաքի վարչական

շրջանների դատախազությունների, մարզերի դատախազությունների, կայազորների զինվորական դատախազությունների վարչական շենքերի ու հարակից տարածքի պահպանության և անցագրային ռեժիմի ապահովման, ներքին ռեժիմի պահպանման նկատմամբ:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հրամանի հավելվածի 4-րդ, 6-րդ, 9-րդ, 23-րդ և 39-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում մասնավոր պահնորդական կազմակերպության հետ անվտանգության ապահովման ծառայությունների մատուցման պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված
ՀՀ գլխավոր դատախազի
«05» 02 2026թ.
N 05-Ա հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՈՒ ՀԱՐԱԿԻՑ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՆԵՐՔԻՆ ՌԵԺԻՄԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

I. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Պահպանվող օբյեկտ՝** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչական շենք:

2. **Անցագրային կետ՝** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչական շենքի հսկիչ կետ, որտեղ այցելուները ստուգվում և գրանցվում են պահպանվող օբյեկտ կամ դրա տարածք մուտք գործելու համար:

3. **Մագնիսական անցաքարտ՝** անցագրային կետի կողմից տրամադրվող պլաստիկ քարտ, որը ներառված է էլեկտրոնային հսկիչ համակարգում և հանդիսանում է մուտքի և ելքի իրավասությունը հաստատող միջոց: Քարտը ակտիվացվում է անցագրային կետում և օգտագործման պահին ապահովում է մուտքի դարպասի կամ դռան ավտոմատ բացումը՝ համակարգում ֆիքսելով ՀՀ դատախազության աշխատակիցների և այցելուների մուտքի և ելքի ժամանակները:

4. **Մասնավոր պահնորդական կազմակերպություն՝** մասնագիտացված անձնակազմ ունեցող ոչ պետական կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որը համապատասխան լիցենզիայի հիման վրա պայմանագրային հիմունքներով մատուցում է պահնորդական ծառայություններ:

5. **Անձը հաստատող փաստաթղթեր՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը, նույնականացման քարտը, զինվորական գրքույկը,

ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, վարորդական իրավունքի վկայականը, իրավասու մարմնի կողմից տրված ծառայողական վկայականները՝ վավերացված Հայաստանի Հանրապետության զինանշանը պատկերող կնիքով կամ օրենքով սահմանված կարգով տրամադրված վերոնշյալ փաստաթղթերի թվային տարբերակները.

1) չափահասի կողմից ուղեկցվող մինչև 16 տարեկան երեխաների համար՝ ծննդյան վկայականը կամ առկայության դեպքում՝ անձնագիրը.

2) փախստականների համար՝ փախստականի վկայականը, փախստականի ճամփորդական փաստաթուղթը.

3) օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրերը, կացության վկայականը:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Պահպանվող օբյեկտի շուրջօրյա պահպանությունն իրականացվում է մասնավոր պահնորդական կազմակերպության կողմից՝ գլխավոր դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության համակարգմամբ:

7. Շենքի և հարակից բակային տարածքի պահպանության, մուտքերի հսկողության և տրանսպորտային միջոցների ելումուտի, ինչպես նաև նյութական արժեքների շարժը շենքի մուտքերով կարգավորելու նպատակով սահմանվում է ներօբյեկտային անցագրային ռեժիմ, որը կոչված է ապահովելու պահպանվող օբյեկտների հուսալի պահպանությունը, բացառելու առանց համապատասխան թույլտվության մուտքն ու ելքը, նյութական արժեքների ներս բերելու և դուրս տանելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցների մուտքի ու ելքի հնարավորությունը:

8. Անցագրային ռեժիմը տարածվում է Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակիցների, շենք մուտք գործող և դուրս եկող բոլոր անձանց և տարածք մուտք գործող և դուրս եկող տրանսպորտային միջոցների վրա:

9. Գլխավոր դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչությունը և մասնավոր պահնորդական կազմակերպությունը ամսական առնվազն երկու անգամ համատեղ ստուգում են անցագրային ռեժիմի հուսալի ապահովման ուղղությամբ անվտանգության համակարգի սարքավորումների տեխնիկական վիճակն ու շահագործման անխափանությունը:

III. ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՕԲՅԵԿՏՈՒՄ

10. Պահպանվող օբյեկտ մուտքը թույլատրվում է միայն անձը հաստատող փաստաթղթերի կամ ծառայողական վկայականի առկայության դեպքում՝ համապատասխան մետաղորսիչ սարքով պարտադիր զննում անցնելուց հետո:

Դատախազները և դատախազության աշխատակիցները պահպանվող օբյեկտ մուտք են գործում առանց պարտադիր զննում անցնելու՝ մշտական օգտագործման մագնիսական անցաքարտերի միջոցով:

11. Գլխավոր դատախազը, նրա տեղակալները, Պետական պահպանության ծառայության՝ գլխավոր դատախազին ուղեկցող ծառայողները, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը պահպանվող օբյեկտ մուտք են գործում առանց մագնիսական անցաքարտերի, մետաղորսիչ սարքի շրջանցմամբ՝ կից դռնակի մուտքով: Շենքին հարակից բակի կողմից տրանսպորտային միջոցներով մուտքը և ելքը թույլատրվում է ՀՀ գլխավոր դատախազին, նրա տեղակալներին, գլխավոր քարտուղարին, ինչպես նաև գլխավոր քարտուղարի կողմից ցուցակով հաստատված տրանսպորտային միջոցներին և դրանցով ժամանած անձանց:

12. Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակիցներին, դատախազներին ծառայողական վկայականի հիման վրա տրվում է մշտական

օգտագործման մագնիսական անցաքարտ, իսկ ժամկետային աշխատանքային պայմանագրով աշխատողներին տրվում է անցագիր պայմանագրի գործողության ժամկետով՝ երկարաձգելու հնարավորությամբ: Հայաստանի Հանրապետության դատախազության անձնակազմի կառավարման վարչության պետը գլխավոր դատախազության դատախազների և դատախազության աշխատակիցների՝ համապատասխան պաշտոնի նշանակման կամ պաշտոնից ազատման վերաբերյալ տեղեկատվությունը պաշտոնի նշանակման կամ պաշտոնից ազատման պահից սկսած մեկօրյա ժամկետում ներկայացնում է անցագրային կետ:

13. ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենք այցելու հրավիրելու նպատակով ներկայացվում է միանգամյա մուտքի անցագրի էլեկտրոնային հայտ: Հայտը ներկայացվում է ՀՀ գլխավոր դատախազության էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով և ընդունում է անցագրային կետի աշխատակիցը, իսկ վերջինիս բացակայության դեպքում շենքի պահպանությունն ապահովող ծառայողը (այսուհետ՝ անցագրային կետի պատասխանատու):

14. Հայաստանի Հանրապետության դատախազության էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի խափանման դեպքում, հայտերը ներքին հեռախոսակապով ընդունում է անցագրային կետի պատասխանատուն, անհրաժեշտության դեպքում դրանք ստուգելու իրավունքով (հետադարձ զանգի միջոցով): Անցագրային կետի պատասխանատուն այցելուին տրամադրում է թղթային անցագիր և մագնիսական անցաքարտ՝ կատարելով համապատասխան նշումներ այցելուի տվյալների վերաբերյալ և արձանագրելով մուտքի ժամը:

15. Այցելուի կողմից թղթային անցագիրը կորցնելու դեպքում այցելուն այդ մասին հայտնում է իրեն հրավիրող պաշտոնատար անձին, որը այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, ում հանձնարարությամբ միանգամյա մուտքի անցագիրը անվավեր է համարվում:

16. Այցելուին ընդունող պաշտոնատար անձը հանդիպման ավարտից հետո պարտավոր է էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգում՝ իր կողմից ստեղծված

անցագրի հայտում, կատարել համապատասխան նշում այցելուի դուրս գալու ժամանակի վերաբերյալ: Թղթային անցագրի կիրառման դեպքում պաշտոնատար անձը պարտավոր է նշումը վավերացնել իր ստորագրությամբ:

17. Միանգամյա մուտքի անցագրի հայտ ներկայացրած պաշտոնատար անձը պատասխանատու է իր կողմից հրավիրված այցելուի շենքում տեղաշարժի համար և պարտավոր է վերջինիս նախազգուշացնել անցագրային կետ ներկայանալու մասին սահմանված մինչև 15 րոպե ժամանակահատվածում:

18. Եթե այցելության ավարտից հետո այցելուն ներկայանում է անցագրային կետ սահմանված ժամկետից ուշ, ապա անցագրային կետի պատասխանատուն պարտավոր է պարզել ուշացման պատճառները՝ համապատասխան ճշտումներ կատարելով այցելուին ընդունած պաշտոնատար անձից: Ստացված տեղեկատվության հիման վրա պատասխանատուն պարտավոր է նշում կատարել էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգում կամ թղթային անցագրում:

19. Միանգամյա մուտքի անցագրի հայտում հայտ ներկայացնողի կողմից պարտադիր կարգով կատարվում է այցելուների կողմից կապի միջոցներ և սարքեր (ֆոտոապարատներ, տեսախցիկներ, ձայնագրող սարքեր, բջջային հեռախոսներ, կապի և տեխնիկայի այլ միջոցներ) պահպանվող օբյեկտ բերելու թույլատրելիության վերաբերյալ նշում: Թույլատրելիության վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգում նշման բացակայության դեպքում պահպանվող օբյեկտի տարածք մուտք գործող այցելուների կապի միջոցները և սարքերը հանձնվում են անցագրային կետ և վերադարձվում՝ շենքից դուրս գալիս:

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակից չհանդիսացող անձանց կողմից պահպանվող օբյեկտ Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակիցների անձնական կամ աշխատանքային անհրաժեշտությամբ պայմանավորված տարբեր իրեր բերելու դեպքում միանգամյա մուտքի անցագրի հայտի համապատասխան հատվածում կատարվում է նշում:

20. Միանգամյա մուտքի անցագրի հայտ ներկայացնելու և իրենց կամ այլ աշխատակցի մոտ այցելու հրավիրելու իրավասություն ունեն հետևյալ պաշտոնատար անձինք՝

- Գլխավոր դատախազի տեղակալները
- Գլխավոր դատախազի օգնականները
- Գլխավոր դատախազի խորհրդականները
- Գլխավոր քարտուղարը, նրա տեղակալները և օգնականները
- Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և նրանց տեղակալները:

21. Էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով տրված անցագրերը պահպանվում են էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգում, իսկ թղթային օգտագործված անցագրերը՝ պահվում են անցագրային կետում, որոնք օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ոչնչացվում են համապատասխան ակտով:

22. Միայնակ անչափահասների մուտքը պահպանվող օբյեկտ արգելվում է: Չափահաս այցելուի հետ շենք մուտք գործող անչափահաս այցելուների տվյալները գրանցվում են համապատասխան մատյանում կամ դատախազության էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգում:

23. Պահպանվող օբյեկտ այցելուների մուտք գործելուց առաջ վերջիններիս ձեռնածանրոցները և պայուսակները, ըստ անհրաժեշտության, ենթակա են ստուգման պահնորդի կողմից: Մետաղորսիչ սարքը ազդանշանելու դեպքում պահակետում ծառայություն իրականացնող պահնորդը հայտնաբերում է ազդանշանման պատճառները, արգելված իրերի հայտնաբերման դեպքում դրանք տեղադրվում են առանձնացված պահոցում՝ բանալին տրամադրելով այցելուին: Շենքից դուրս եկող այցելուն պահոցի բանալին հանձնելով պահակետում ծառայություն իրականացնող պահնորդին՝ անձամբ ստանում է ի պահ հանձնված իրերը:

24. Սույն կարգի պահանջների կատարումն ապահովելու նպատակով արգելվում է՝

1) պահպանվող օբյեկտ մուտք գործել զենքով, բացառությամբ՝ դատախազներին՝ վերջիններիս պահելու և կրելու իրավունքով ամրացված զենքի,

2) պահպանվող օբյեկտ ներս բերել քիմիական, պայթուցիկ, հրավառ և դյուրավառ նյութեր, ինչպես նաև այնպիսի իրեր և միջոցներ, որոնց առկայությունը կամ կիրառումը կարող է վտանգ ներկայացնել շրջապատում գտնվող անձանց համար (այդ թվում՝ քաղաքացիական զենք),

3) պահպանվող օբյեկտ ներս բերել ոգելից խմիչք, բացառությամբ՝ արարողակարգային նպատակներով կամ միջոցառումների կապակցությամբ՝ գլխավոր քարտուղարի թույլտվությամբ:

25. Արգելվում է ալկոհոլի, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործող), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցության հետևանքով ոչ սթափ (հարբած) վիճակում կամ ագրեսիվ պահվածք ունեցող կամ Հայաստանի Հանրապետության դատախազությունում ՀՀ գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 108 հրամանով սահմանված հագնվածքի կանոններին և սանիտարահիգիենիկ պահանջներին չհամապատասխանող վիճակում գտնվող անձանց մուտքը պահպանվող օբյեկտի տարածք:

26. Արգելվում է պահպանվող օբյեկտի պատուհաններից ստանալ կամ փոխանցել որևէ իր:

27. Օտարերկրյա պատվիրակությունների, ինչպես նաև պահպանվող օբյեկտում կազմակերպվող խորհրդակցություններին, հանդիպումներին և այլ միջոցառումներին հրավիրված անձանց մասով արարողակարգի վարչությունը ընդհանուր ցուցակ (հայտ) է ներկայացնում անցագրային կետ: Անցագրային կետի համապատասխան ծառայողը հայտի (ցուցակի) հակառակ կողմում նշում է կատարում պահպանվող օբյեկտ այցելած պատվիրակության անդամների թվի, մուտքի և ելքի ժամանակի մասին:

28. Պահպանվող օբյեկտ անարգել մուտք գործելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հանձնարարությամբ՝ այլ անձինք:

29. Սույն կարգի 28-րդ կետում նշված անձանց ուղեկցող անձինք պահպանվող օբյեկտ մուտք են գործում Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի կամ արարողակարգի վարչության պետի կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ նախնական պայմանավորվածությամբ:

30. Ծառայողական վկայականները բացված վիճակում ներկայացնելով՝ համապատասխան հայտի հիման վրա պահպանվող օբյեկտ մուտք գործելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալները, քննիչները.

2) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալները, քննիչները.

31. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սուրհանդակային կապի վարչության ծառայողները պահպանվող օբյեկտ մուտք են գործում ծառայողական վկայականները բացված վիճակում ներկայացնելով՝ նախապես ներկայացված ցուցակների առկայության դեպքում:

32. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության «Հատուկ կապ» ՓԲԸ աշխատակիցները պահպանվող օբյեկտ մուտք են գործում նախապես ներկայացված ցուցակների առկայության դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա:

33. Տրանսպորտային միջոցները շենքի բակ մուտք են գործում գլխավոր քարտուղարի ստորագրությամբ պահակետին տրված ցուցակի կամ միանգամյա գրավոր թույլտվության հիման վրա՝ նշելով ավտոմեքենաների պետհամարանիշները:

34. Լրագրողները պահպանվող օբյեկտ մուտք են գործում Հայաստանի Հանրապետության դատախազության հանրային կապերի բաժնի պետի հայտի հիման վրա գլխավոր քարտուղարի հաստատմամբ:

IV. ՆԵՐՔԻՆ ՌԵԺԻՄԸ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՕԲՅԵԿՏՈՒՄ

35. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բոլոր աշխատողներն աշխատանքային օրվա ավարտից հետո և աշխատանքային օրվա ընթացքում ժամանակավոր բացակայության դեպքում պարտավոր են զննել իրենց աշխատասենյակները, անջատել էլեկտրաջահերը և մյուս էլեկտրասարքերը, փակել պատուհանները և բանալիով կողպել աշխատասենյակների դռները: Ազդանշանային համակարգով սարքավորված աշխատասենյակներն աշխատանքային օրվա ավարտից հետո ենթակա են ահազանգման համակարգի գործունեության ստուգման և կնքման:

36. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների աշխատասենյակ մուտք գործել չի թույլատրվում զենքով, կապի միջոցներով և տեսաձայնագրող սարքերով, ժամացույցով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված իրերով կամ դրանցից որևէ մեկով աշխատասենյակ թույլատրվել է մուտք գործել վերոնշյալ անձանց կողմից:

37. ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքի բոլոր աշխատասենյակների բանալիների կրկնօրինակները (բացառությամբ առաջին բաժնի սենյակի) գտնվում են գլխավոր դատախազության տնտեսական սենյակում: Աշխատասենյակներն ունեն համարակալված ցուցատախտակներ, իսկ համապատասխան սենյակների դռների բանալիների կրկօրինակները՝ նույն համարներով կախազարդ:

38. Տնտեսական սենյակի բանալին գտնվում է գլխավոր դատախազության անցագրային կետում տեղադրված հատուկ արկղում, որը կապարանքված է և կարող է բացվել բացառապես արտակարգ դեպքերի ժամանակ՝ (հրդեհ, երկրաշարժ, էլեկտրացանցի, ջրատարի, կոյուղու վթար և այլն) ծառայողական աշխատասենյակները բացելու նպատակով: Տնտեսական սենյակի բանալու կրկնօրինակը գտնվում է գլխավոր դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության պետի մոտ:

39. Արտակարգ իրավիճակների ժամանակ (հրդեհ, երկրաշարժ, էլեկտրացանցի, ջրատարի, կոյուղու վթար և այլն) ծառայողական աշխատասենյակները բացում են

մասնավոր պահնորդական կազմակերպության հերթապահ պահնորդները՝ դրա մասին անհապաղ հայտնելով գլխավոր դատախազության ղեկավարությանը և համապատասխան վարչությունների պետերին: Միևնույն ժամանակ, պահնորդն անհապաղ տեղեկացնում է վթարային ծառայություններին, նրանց ուղեկցում պահպանվող օբյեկտում: